N 01/01-17

«09» 01 2025

«Արվադա Գրուպ» ՍՊԸ-ի
Տնօրեն Դ. Գասպարյանին
(Ք. Երևան, Սայաթ-Նովա 33, բն. 71.
հեռ. 055-82-40-82,
էլ. հասցե arvadagroupllc@gmail.com ,
ՀՎՀՀ 02891999)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Արվադա Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի նոյեմբերի 27-ին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7-3 գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված **առնվազն 20 օրացուցային օր՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը:**

Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները մատակարարվել են, բացառությամբ 25 հատ վրձին ներկարարի 8սմ և 10000 հատ պտուտակ 50մմ * 5մմ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի), «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը մասնակի միակողմանի լուծում է պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Վաճառողը պարտավոր է փոխանցել **200,9** (երկու հարյուր ամբողջ ինը տասնորդական) ՀՀ դրամ որպես **տույժ** (Պայմանագրի 6,2 կետի համաձայն), **8875** (ութ հազար ութ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ որպես **պայմանագրի ապահովում** և **13312.5** (տասներեք հազար երեք հարյուր տասներկու ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ **որպես որակավորման ապահովում**, որոնք անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա **ընթացքում՝ մինչև 2025 թվականի հունվարի 16-ը ներառյալ**, վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի գնումների բաժնին տրամադրել վճարման անդորրագրերի պատճենները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ գալու դեպքում ՝պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազոր մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիր կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ _____ **Ա. Գրիգորյան**

Կատարող գնումներ համակարգող

Գոհար Թադևոսյան

հեռ. 593-483